ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 61

ք. Երևան **11.05.2022թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/9809-2022, ՀՀ շրջակա միջավայրի 4/02.3/7369-2022, ՀՀ էկոնոմիկայի 03/6621-2022 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/4215-2022 և Կադաստրի կոմիտեի ԱԳ/4505-2022 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն **ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Արագյուղ բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Նաիրի համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից **0.085 հա** արոտավայր (կադաստրային ծածկագիր՝ 07-012-0249-0014) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Մ. Մկրտչյան